

արուբիները կը յայտնէ և սակայն մասնաւոր ընկերութեանց յարատեւութեանը վրայ լիովին վստահութիւն չունենալով, երաշխաւորեալ մարմնը մը կուզէ յանձնել այն գումարը, ազգին օգտին գործածելու համար: Տիվիսի ազգատէրը կը խնդրէ ս. պատրիարքէն որ իր գրոյն պատասխանը փութացնել բարեհաճի, որպէս զի ինքն անձամբ Կ. Պօլիս գալով յանձնէ խոստացեալ գումարը:

Աստի այսպիսի յիշատակաց արժանի գործի մը յաջողութիւն մտղծելով կը յորդորենք մեր սիրելի ազգայիններն որ սոյն օգտակար հաստատութեան չը զլանան իրենց օժանդակութիւնը:

(Հայրենիք)

TEMPES. ԼԵՍԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԼԱՅՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Tempes լրագրի Կ. Պօլիս թղթակցիցը, հայերի վերաբերութեամբ, հարորում է հետեւեալ հետաքրքիր տեղեկութիւնները, որոնց կարևորութիւնը ճանաչելով, մենք հարկ ենք համարում ներկայացնել նրա թարգմանութիւնը մշակելու ընթացիկներին: Ահա սյոք թարգմանութիւնը:

«Անաստիայի անցքերի վերաբերութեամբ իմ հարորած տեղեկութիւններն արժանի են ուղարկութեան, ի՞նչէ մինչև անգամ այս հարցի վրա նայի այն դժուարութիւնների տեսակետից, որոնց Անգլիան յանձն է առել ունեացնել:

«Անի հայերն անգլիական փոխ-հիւպատոս կապիտան Կէլյոնի մօտ պատգամաւորութիւն ուղարկեցին, որը նրան ներկայացրեց մի աղբրագիր, որ լցված էր մի քանի հազարաւոր մարդոց ստորագրութիւններով: Այս վարմունքով հայերը կամենում էին ազդու պաշտպանութիւն գտնել քիւրդերի յարստեւ ճնշումների դէմ այն պետութիւնից, որի ներկայացուցիչ էր համարվում պ. Կէլյոն:

«Կէլյոն պատասխանեց պատգամաւորութեանը, թէ նրան էլ շատ լաւ յայտնի է որ նրանց բողոքները արդարացի են, որ նոյն իսկ նա ինքն էլ վկայ է եղել քիւրդերի անասնելի ճնշումներին և որ ինքն այդ մասին արդէն տեղեկութիւն է տուել իր կառավարութեանը: «Բայց, աւելացրեց նա, Գիւրքեթլիում Արէզի-փաշայի ձեռքով, իսկ Երզրումում կայսերական յանձնաժողովի միջոցով կատարված վերանորոգութիւնները հաւաստի ապացոյց են, որ բարենորոգութիւնները կը հասնեն մինչև ձեր նահանգներին էլ: Եթէ մինչև այժմ դուք դեռ չէք վայելում խոստացված բարենորոգումների պտուղները, դրա պատճառն այն է, որ դուք բաւականին հեռու էք գտնվում կայսրութեան կենտրոնից:» — Պատգամաւորութիւնը գոհ չը մնաց նրա յայտնած պատճառից, և սուեց հետեւեալ պատասխանը հիւպատոսին:

«Բ. Կուրքեթլի, Բերլինի դաշնադրութեան 61 յօդուածով, մեզ խոստացել է առանց ուշացնելու գործարդել այդ վերանորոգութիւնները: Մենք որ վկայ ենք եղել այնքան խոստումներների, այնքան յուսադրութիւնների, որոնք Բ. Կրան կողմից հնչուած ենք տրվել են մեզ, և որոնք միշտ անիրագործելի են մնացել մենք չենք կարող այդպիսի խոստումներներն նորից հաւատար: Բայց տեսնելով, որ Սեբաստիայի հետաքրքրում է այս հարցով, տեսնելով որ Անգլիան, յունիսի Գ. Փ. դաշնագրութեամբ, իր ձեռքն է առել վերանորոգութիւնների իրագործումը, մենք սկսել ենք յուսալ: Ասկայն, մինչև այժմ գործ դրված միջոցները, որոնք այնչափ վերտահութիւն են ներշնչում ձերը զերազանցութեան, մեզ անբաւարար են թվում և, ճմարտան ասած, դրանց նպատակն է միայն շլացնել ներքային Բոսնիական վերանորոգու-

թիւնների վերաբերութեամբ, մենք հիմնաւոր պատճառներ ունենք երկեւզ կրելու, որ նրանք դեռ երկար սպասել կը տան իրանց: «Ինչու մեզ խորհուրդ էք տալի համարել, բայց դուք պէտք է գիտենաք, որ 76-ին մի զարհուրելի հրեհ հմեկիւր դարձրեց մեր բարձրը, որ մեր բոլոր հարստութեան միակը տեսնարան էր. և վերջին պատերազմն էլ վրա հասնելով, վերջին ծայրը հասցրեց մեր թշուառութիւնները: Այսպիսի պայմանների մէջ մեզ անկարելի է սպասել: Ինչու մեր երկրում էք, և դուք ձեր աչքերով տեսնում էք, թէ դժուար է հարստահարութիւնների վերջ դնել, եթէ միայն անկեղծ ցանկութիւն լինի: Ճշմարտ է, որ Արէզի-փաշան Գիւրքեթլիում մի քանի վերանորոգութիւններ մտցրեց, բայց երբ նրան ուղարկեցին Սիվաս և երբ նրա սխառ գործը ընդհատվեցաւ, այդ մի տեսակ արարը շատ քիչ յոյս է տալի մեզ գործի ապագայի մասին:»

«Կէլյոն պատասխանեց պատերազմից առաջ կարելի էր երկեւզել որ յայտնված վերանորոգական միջոցներն նորատակն էր շլացնել Սեբաստիային: Այսօր դա անկարելի է, որովհետեւ Սեբաստիական հիւպատոսները հսկում են այդ վերանորոգութիւնները իրագործման վրա, և դրանց մասին հաշիւ են ներկայացնում իրանց կառավարութիւններին, թէ և ճշմարտան տասած, այդ վերանորոգութիւնները փոքր ինչ ուշացած են վերջին պատերազմի սարսափելի դիպուածների և Գիւրքեթլիական ճնշումների պատճառով, որը այնպէս սաստիկ ծանրացել է պետական գանձարանի վրա:»

«Պատգամաւորութիւնը պնդում էր հիւպատոսի առաջ, որ շարունակ հարստահարութիւնները և ճնշումները անտանելի դրութեան մէջ են դնում նահանգի աշխատող ազգաբնակչութեանը: Գիւրքեթլի, աւելացրեց պատգամաւորութիւնը, այսօրվան օրս վերջին պատերազմի շնորհիւ, ունեն իրանց ձեռքբերում նոր տեսակի զէնքեր: Տեղական իշխանութիւնները մեր հարստահարողներին գիւրքեթլի անկողի համար մեծ անհողութիւն են գործ դնում: Արանց յետոյ կարելի է կենթադրել, որ իշխանութիւնները իրանք են սուել այս զէնքերը քիւրդերին, որ գործ դնեն այն ժողովրդի դէմ, որ սուլթանի հաստատութիւն հպատակներն են: Անգլիս հայերը, առանց պաշտպանութեան, գրեթէ ամեն օր քիւրդերից կողովում են, որոնք յարկաւորում են նրանց պաշարները և հազուադէպ, այնպէս որ մեր խեղճ եղբայրները ստիպված են լինում խուճերով գաղթել մերկ և քաղցած:»

«Այդ ժամանակ պ. Կէլյոն ասաց, որ Սեբաստիայ այդ օրերը հասել էր վան, և չը նայելով, որ ինքը հաստատ տեղեկութիւններ չունի այդ պաշտպանատարին տուած հրահանգների մասին, բայց ինքը կարծում է, որ նա եկել է քիւրդերին նուաճելու և իրագործելու վերանորոգութիւնները: Այս քանի վրա պատգամաւորութիւնը, Կէլյոնից հրատարակու ժամանակ, պատասխանեց, որ շուտով ձեռքը հասնում է և ձիւնը կը կտատի այն վերանորոգութիւնները, որոնց իրագործումը յանձնված է Սեբաստիային: Հայ պատգամաւորներն սյապէս խօսելով, անարկում էին ձեռնկայ վրա հասնելուն, որը այս կողմերում շատ խիտ է լինում և իր բոլոր տեղորոգեան միջոցին մի նիւթակն արգելք է դնում քիւրդերի արշաւանքներին:»

«Ըն կաւելացնեմ, որ այստեղ տխուր բուրբ են հասել սովի մասին, որ այս կողմերի թշուառութիւնները վերջին ծայրն են հասնում: Զը նայելով, որ այս նահանգը, ցորենի արտադրութեան կողմից, կայսրութեան նահանգներից ամենահարուստն է, բայց և անպէս այս բուլիին ցորենի մէջ կիւն այնտեղ արժէ 700 պիստարի ահապին դումարը: Այստեղ գործածվող հացի մէջ քացի սպիւրից ամեն բան կայ. այս հացը, ասում էր վա-

նից ստացված մի նամակ, իր չորութեան կողմից միայն մեր երկրի քարերի հետ կարելի է համեմատել:» Մարդիկ մեռնում են սովից, և մանուկներ խմելով թափառում են փողոցներում, և արտաճիկ աղաչանքներով հայ են մուրում: Այստեղ և Մանչեստրում ստորագրութիւն է բացվել: Բայց թշուառութիւնը այնպէս ընդհանուր է, որ շատ փոքր կարելի է օգնել այս թշուառներին:

ՆԱԽԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՆ

Կ. Պօլիս, 3 փետրվար

Հայաստանի սովի խնդիրը մեզ համար ամենէն կարևոր հարցերէն միւն է. սովից պէտք եղած օգնութիւնն անելու համար Կ. Պօլիս մեծ աշխատութիւններ տեղի կունենան: Գաղթ-դիւղ կետերն աշխատող մը կազմուեցաւ որ իւր ճիւղերն ունի ամեն թաղերու մէջ. ամեն կողմ մասնաժողովներ կը շրջապան անձամբ տուններն, և կը հասնեն նուէրներն. ամեն ոք հարուստ թէ աղքատ կը մասնակցեն հանգանակութեան: Կետերով մասնաժողովը իւր ձեռքն կը տարած ամեն նայթնակ դաւաճելու և քաղաքներ. յոյս ունենք, որ այդիւնք բաւական նպաստ որ լինի Պատրիարք սրբազանը բոլոր աշխատութեանց զուլան կը համարուի. ինքն կատարած է Կ. յանձնաժողովը ընտրութիւնը և ընդհանուր հսկողութիւնը կընէ: Վանայ կողմերը այս ամառ անձերի պակասութիւնը արդէն երկեւզ կուտային, աւելցուր վաճառականաց շահագիտական աններելի սեպուած ձգտումներն, և կառավարութեան ձեռք տաւած միջոցներն, որով ցորենը իւր շտեմարաններու մէջ կը պահէ, շատ սուղ ծախելու դիտարորութեանը լրագիրը կը հարողներ թէ Պատրիարքութեան միջնորդութեամբ կառավարութիւնը Հայաստանի գանազան քաղաքները սովեալ տեղերն ցորեն խրկի է, հարողներով միանգամայն Պատրիարքարանի: Սովի գլխաւոր տեղը վան է, յետոյ կուգան Ալաշկերտ, Պայպուտ, Բուսաստանի եղբայր յորդանանց պէտք չունեն տարաբաղ հայոց օքնութեան ձեռք կարկառելու համար: Միայն Վեստիոն հետեւալ տողերն յառաջ բերեմք, «կը շատ թէ Կ. Պատրիարք հայրը ս. Էլմիրանայ վանքէն 24 ժամ հաղիւ հեռաւորութիւն ունեցող վաղարշակբերի և Պայպուտի տարաբաղ սովից վրայ վ. հ. Կաթոլիկոսին հայրական գործազուտ սիրտը շարժելու նամակ մը գրել է՝ խնդրելով որ գոնէ Բուսիոյ ազգայնոց մէջ հանգանակութիւն մը բանալու համար յօդուածներն լիջնալ ողորմելի ազգայնոց ֆաղցր է մեզ հաստալ որ ս. Պատրիարքին նամակն ընդունելէ շատ յառաջ վեճապիտ Էջմարտեք արդէն ձեռքն ի գործ արկած լինի Անգլիական ղեկավարներուն և կալիստոյ Լոնդրայն նպատակ բերել յօդուած ֆոքր-Ա. ս. ոյ սովից, և հաւանական է, որ յաջողի, թէպէտ և թիւք թերթներն հոս ալ քաղաքական դիտարութիւն նկատելով, անցանքներն յիմարար կը հրատարակեն, թէ լաւագոյն կը լինի որ Անգլիան իւր աղբաններն հոգայ: Գաղաքական դիտարութիւններն տածկաց սարսափն եղած են և ուր որ նշան մը տեսնեն կը յուզուի: Մեր թէրճմանը Էջմարտեք ղեկավարներն այս առիթներէն մին էր նոցա համար: Ինչպէս ղեկաւ Թերթերն անորեն և արտոնատէրը ձերբակալուած էին իր Ժողովարդը գրգռող, ս. Պատրիարքի միջնորդութեամբ ազատուեցան և Ել աղթն այս առիթ կը յարձի Պատրիարքի վրայ թէ այս ալ կրօնական խնդիր է, որ հայոց Պատրիարքը կը միջամտէ, քաղաքականութիւն կայ, կը գուէ, Կուզէ քաղաքականութիւն լինի, կուզէ չը լինի, Պատրիարքը Թերթերն խնդրող մէջ ուղիղ ընթացք մը բռնեց: Այս թերթը այժմ մեծ ժողովրդականութիւն մը ստացաւ, և օտարաց առջև Պատրիարքարանի բերանը կը համարուի: Գաթաստանը առ այժմ առկայ է թերթերն արտոնատէրը հուովական հայ մ'էր և թէպէտ թերթը կրօնական զոյն չունի, բայց Հասունի բարիկամներէն լինելն հաւանական կը թուէր. ամեն ոք կը սպասէր Հասունի միջամտութիւնը, բայց մեր Պատրիարքը ազնիւ ապացոյց մը տալ թէ ազգային ընդհանրութեան վերաբերեալ ամեն խնդրող մէջ ինքն է միակ պաշտօնական ներկայացուցիչ: Հայաստանի վերաբերեալ խնդրող մէջ մեր Պատրիարքի քաղաքականութիւնն սկսած է այն զոյնը առնուլ, որով ոչ միայն յանուն հայոց խօսի, այլ յանուն թղթաց ևս: Անցանքներն մէկ քանի դէպքերու մէջ տեսնեք որ սուրբի և ուրիշ խնդրող մասին հայք և թուրք միաբան հանրազիրներ խրկեցին ի Պատրիարքարան, և աստեղ մէջ նշա-

նաւոր էր ֆիլի գայմագամի մասին խրկուած նամակը: Ահմէտ Պէյ անուց գայմագամը (կառավարի) հազուադէպ պաշտօնեայ մ'է որ տեղային ղեկավարներն դատին պաշտպան է հայ թէ թուրքը: Ընդհեմ քիւրտ պէյերու պէյերը չը կրցան հանգուրծել, բողոքեցին Կարին և կաշառեցին. կառավարութիւնը, որ շատ անարժանեք չէր տեսնուի քիւրտ պէյերու ընկճուելը, որչեց պաշտօնական ընկ Ահմէդ պէյ: Տեղւոյս հայ և եւրոպացի մասնապաշտպան եղան Ահմէդի. և ֆիլի ժողովարդը դիմեց սրբազան Պատրիարքի և նորա միջամտութիւնը խնդրել: Սրբազան Պատրիարքը բաւ չոք որ ձեռք բերելու եկածը չը պիտի խնայէ, և զի նորա միտ ալ ան է, յորդորեց գանձեք որ ուղղակի զորդիմն, և հայ ու տաճիկ կատարեցին Պատրիարքարաններն: Այսպիսի դէպքեր Սաիդ բաշայի ջլլարուն կը զգչեն, 1 է յարդի շատ անործելի չեն կ'ենք, բայց հայոց Պատրիարքարանի ազդեցութիւնը զօրացնելու կը ծառայեն, զօրութիւն մը, որոյ կողմ իսկ կարտ եմք: Այս ազդեցութիւնը խորտակելու Գուուր միւտ հետամուտ է և քանիցս գրած եմք, որ զանազան առիթներ կը փնտռէ իւր փափազանք ձեռք բերելու համար. ստուցմէ մին էր կարգու ծախան վկայագիր տալու խնդիրն, զվեստարագիւ մեր Պատրիարքարանի դիմադրութեամբ այդ որոշումը ետ առնուեցաւ, որ էր պատրիարքաց կը ներքերու առիթեր իմանելու կիլիքներն ղեկը: Բայց այժմ կը զրուցուի որ թողապետութեանը կիլիքներն կարտ պիտի ճանչուին, անսնեմք այս մասին ինչ կընեն: Բարեբաղդաբար նախարարական փոփոխութիւններ մօտ կիլիքին և արդարեւ իրենց նախարար ձէվէթ բաշայի պաշտօնանկութիւնը հաւանական է, Շատ աւելի գոհ պիտի լինեմք, երբ Սաիտ տապալի: Երբ Պատրիարքարանաց զօրութիւնը սկսարճեցու խորհուրդը ի գործ դնելու համար ամեն աշխատութիւն կըլլայ, միւտ կողմ կը լսեմք թէ 1 է յարդ նոր Պատրիարքութիւն մը հաստատելու փորձեր կընէ Երզրական ժողովարդ անուամբ հասարակութիւն մը տեղեկելու և այս հասարակութեան ղուլը մեր Պատրիարքաց հաւասար իրաւունքներ վայելէ. չեմք փոքր թէ Գուուր լաւ ընդունելութիւն մը կընէ այնպիսի առաջարկութեան մը թէ ոչ, Գուուր այս առիթէն Գուուր օգուտ քաղէ Պատրիարքաց իրաւունքեան սահմանը չափաւորելու կանոնագիր մը պատրաստուու. բայց մեզ համար լաւ է խորհել թէ ճիշդ մը չը կայ որ բողոքական հայոց քաղաքական հոգերն մեր Պատրիարքարանը կարենալ մտածել: Չափ կատանի հայ բողոքականք տակաւին չեն ճանչուած զատ մարմին մը, ունին ազգայեան մը, որ ստուար զորքեր կը տեսնուէ. ազգայեան միանգամայն իրեն յատուկ աշխատութիւններն ունի, որոնցով կապիր: Պէտք է խոստովանել, որ աղբապիտ պ. Մատթէոսեան պատուական անձ մ'է, աղբապէր և աշխատող: Կնքնակարութեան խնդրող միջոցին ինչ որ կարող էր ընել ի նպատակ խնդրոյն ըրաւ. ոչ միայն ինքն այսպէս շարժեցաւ, այլ Կ. Պօլիս լուսաւորեալ հայ բողոքականներն Սրբա ազգային զգացումը վառ պատած են իրենց սրտին մէջ և լաւ դատարարութիւն մը աւելի զորացուցած է այս զգացումը. շատ մաքուր հայեր կը լսուեն, թէ իրենց ընտանեկան կենաց թէ չուկայի դարձումաց մէջ, իրենց ամենէն մեծ սուրը՝ Գուուրը մեզ հետ կը կատարեն յոճանար Ելի: Հայաստանի ինքնօրնութեան ջերմ փափազողներն են և իրենց ազդեցութիւնը ի գործ կը դնեն առ այս. իրենցմէ գոհ եմք: Բար էր թէ այնքան հոգի լինէիք մեր հոռովական հասունեան հայերէ. բայց նոքա շատ տղէտ և ճիզովական հոգով մեծ կղերի մը ճիրաններու մասնուած, միլիթարական երևոյթ մը չեն ընձայելու: Բայց և այնպէս կը տեսնուի, որ նոցա մէջ իսկ շարժում մը տրած է: Ելեքստ սրբազանի գործերն տպաւորութիւն կընեն լրանին. նոքա, որք կը կարծեն ատեն մը թէ Հասուն գերապայծառ կաթոլիկ տէրութեանց միջնորդութեամբ ազգին տունը պիտի վերականգնուէ, ապրած են, որ Հայաստանի համար այսպիսի մեծ խնդիրներ յուզուած ժամանակ Հասունի ճայրը չը լսուի: Անձնապրութիւններն միտարարուած կամ խարուած ըլլալն իմացած, կամ լաւագոյն ևս ազգայնորութեան նին ոգին բողոքական գոհ ևս արած չըլլալով, շատերն ի նոցանէ Երբայ մը պատրաստուու համար եղած լուսաբան հոտ վտտանելի անձեր կը յայտնեն թէ այս նոր պատրաստուած խումըը Հասուն գերապայծառութիւնը միւտ ձեռք կը բանեցնէ որ չէ թէ Ելեքստ պատրիարքի ձեռնարկութեանց արգելք լինի, այլ մասնաւոր ընկերանայ նմա: Անցանքներն Հասուն ելք մեր Պատրիարքի անձամբ այցելութիւն տուաւ, է փոխարէն մեր պատրիարքական փոխանորդի տուած այցելութեան, բաւական մեկնութեանց տեղի տուաւ այս այցելութիւնը. շատ հաւանական է, որ իւր նար հայրենաւոր մարդ գոհացնելու և Հասունի